

Ս. Ս. Բրահամյան

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տեղական (տեղիտորիալ) բարրառները... սպասարկում են ժողովրդական մասսաներին և ունեն իրենց քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը¹։ Այս կամ այն բարրառի և համաժողովրդական լեզվի ու մյուս բարրառների միջև, անկասկած, լինում են ընդհանրություններ, քանի որ տվյալ բարրառը մյուս բարրառների հետ միասին համաժողովրդական լեզվի ճյուղավորումն է և ենթակա է նրան, լինում են նաև տարբերություններ, որչափով տվյալ բարրառը հեռանալով համաժողովրդական լեզվից՝ պատմական զարգացման ընթացքում դրսևորվում է իրեն առանձին որակ, որն ունի իր տարրերիչ գծերը։

Բարրառների քերականական կառուցվածքի ուսումնասիրման գործում առավել ուշադրության պետք է արժանանա հատկապես այն, ինչ որ հատուկ է տվյալ բարրառին, ինչով որ նա տարբերվում է համաժողովրդական լեզվից ու մյուս բարրառներից։ Ընդհանրություններն, իհարկե, չպետք է անտեսել, բայց բարրառի դեմքը պարզվում է հատկապես նրա՝ իրեն հատուկ քերականական և այլ իրողություններով, քանի որ նա որպես առանձին բարրառ գոյություն ունի հանձին այդ յուրահատկությունների ու տարբերությունների։

Այդ յուրահատկությունները, որոնք պատմական զարգացման երկարատև պրոցեսի արդյունք են, կարող են առաջանալ տարբեր ուղիներով։ Մենք այստեղ ցանկանում ենք ոչ թե հանգամանորեն քննել այդ ուղիները, այլ մի երկու դիտողություն անել դրանց վերաբերյալ՝ ներկայացնելով որոշ բարրառներին հատուկ մի քանի հետաքրքրական իրողություններ։

Բարրառի պատմական զարգացման ընթացքում՝ համաժողովրդական լեզվի քերականական այս կամ այն իրողությունը, կատեգորիան բարրառում կարող է զարգանալ այլ կամ նաև այլ ուղղությամբ՝ ձեռք բերելով քերականական նոր իմաստ, ձևավորվելով իբրև քերականական նոր կատեգորիա։ Այս տեսակետից հետաքրքրական է, թե ինչպես Ղարաբաղի և Հադրութի բարրառներում բառի անորոշ և որոշյալ առումները արտահայտվում են ոչ միայն ժամանակակից հայերենի հատուկ եղանակով, այլև հոլովման տարբեր տեսակների, տարբեր հոլովումների միջոցով։

Հայտնի է, որ հայերենում բառի որոշյալ և անորոշ առումների տարբերիչ գիծը որոշիչ հոգն է, որը գրվելով բառի վրա, նրան տալիս է որոշյալ առում, դրանով էլ բառը կամ բառաձևը տարբերվում է անորոշ առում-

¹ Ի. Վ. Ստոլին, *Մարբսիզմը և լեզվաբանության հարցերը*, Երևան, 1952, էջ 52։
Տեղեկագիր 7--5

մից: Իսկ բառի անորոշ առումը ձևային յուրահատուկ գրսևորում չունի, քերականական որևէ մասնիկ չի ստանում, կամ, ինչպես ասում են, ունենում է զրո վերջավորություն: Դա միակ միջոցն է այդ առումների տարբերակման համար ոչ միայն գրական հայերենում, այլև հայերենի շատ բարբառներում: Այդ միջոցը առկա է նաև Ղարաբաղի ու Հադրութի բարբառներում:

Բերենք բառերի որոշյալ առման օրինակներ՝ «Աղամ-աղամ, Ղալին տըղամարդոց բըմբասանքըն աղամ, փօղ ուտելըն աղամ, մին-մինու վըննատակ քանդիլըն աղամ, սըրտնէրին ցախանձըն աղամ. օրը բրու հըրուգունը թօփխանումը պարապ-սարապ կաղնելըն աղամ, աղամ և աղամ»¹: «Թա Ղալին կընանիքըն ու ըխճըկէքը հըշաէդ պէգմա ընին, ըտըրա մասին բալարանըն սուս ա անրմ»²:

Անորոշ առման օրինակներ. «Մըհեգսա տէնը հու վէր ծրմական գրկէն, սէգնը*³, մրհասուր, շիօր, զգղան, յա քըլըխընձօր քաղե, խարջ պէգմա ինք՝ օնին»⁴: «Պէն ա, թա վէր օզըմ ըն յէս լըհա տըմրլաշուքուն ընէլավ մէոնիմ, էտ էլ դարուլ չի ինձ»⁵: «Մին պէն էլ կա, էն էլ ասիմ, քժէդ կըլխըցըլօ-թուն տամ»⁶:

Սակայն, ինչպես ասվեց, Ղարաբաղի և Հադրութի բարբառներում գոյություն ունի բառի որոշյալ և անորոշ առումների գրսևորման նաև մի այլ, յուրահատուկ և այդ բարբառների համար ավելի տիպական եղանակ, այն է՝ որոշյալ առման գեպտում՝ բառը ենթարկվում է մեկ, իսկ որոշյալ առման գեպտում՝ այլ (ու) հոլովման: Այսպես, Հադրութի բարբառում աատ, սար, քար և այլ բառեր որոշյալ առման գեպտում հոլովվում են է հոլովում-մով՝ պատէն, սարէն, քարէն, իսկ այդ նույն բառերը անորոշ առումով կլինեն պատու, սարու, քարու: Կիր «գիրք» ծի «ձի և այլն բառերը որոշյալ առման գեպտում պատկանում են ի հոլովման, իսկ անորոշ առումով կլինեն՝ կիրու, ծիյու և այլն:

Բերենք օրինակներ Ղարաբաղի բարբառից, զուգադրելով միևնույն բառի որոշյալ և անորոշ առումները:

Մարթ «մարդ»

որոշյալ առումով. «էն մարթին գըրվաղան տուս քըցի» (Տմրլաշի Խաչան, ն. տ., էջ 15): «Տըմրլաշի մարթին պէնը փէշտակըն էլ էտ ա (ն. տ., էջ 37):

Անորոշ առումով. «Ախճի, վըէր ասըմ ըն չըտէսին նըհետ սըըկըմօ-

¹ Տմրլաշի Խաչան, Ձուռնա-տմրլա, գիրք Ա, Վաղարշապատ, 1907, էջ 80—81:

² Նույն տեղում:

³ Սէգնը բարի ըն որոշիչ հոգ չէ: Այն միավանկ բառերը, որոնք զրաբարում ունեցել են ն վերջնահնչյունը (եղն, ոտն, սեգն և այլն) արդի հայերենում վերջին ն-ն բառի ուղիղ ձևում ընկել է, իսկ Հադրութի և Ղարաբաղի բարբառներում այդ ն-ն պահպանելու նպատակով վերջում ավելացել է ր ձայնավոր (յէգնը, վըէնը, սէգնը): Այդ ընդհանուր էլ նման բառերի ուղիղ ձևը որոշյալ և անորոշ առման տարբերակում սովորաբար չի ունենում: Միայն հրեմն (հատկապես, երբ բառին հաջորդում է օթանդակ բայ կամ դոյականը հանդիսանում է օնէլ «ունել» «ունենալ» բայի խնդիրը) գրանք զործածվում են առանց հոգի: Օր. սէգն ըմ քաղալ: էրկու յըէգն օնէ:

⁴ Նույն տեղում, էջ 30:

⁵ Նույն տեղում, էջ 82:

⁶ Նույն տեղում, էջ 83:

թուն մանէլ է, զօրթ ա, մարթու զահլա յս քընըմ» (ն. տ., էջ 6): «Երկունն էլ մարթու փայգա չըն» (ն. տ., էջ 57)

Պէն քրան»

Որոշյալ առումով. «Ժըղօվուրթըն էլ շատ օրախ ա էտ պէնին յըրա» (ն. տ., էջ 31):

Անորոշ առումով. «Հըվաքած փօղը մին պէնու քարսաղ չի տըէռալ» (ն. տ., էջ 29): «Յէս պէնու խարար չըմ» (ն. տ., էջ 30): «Պարի պէնու մըհար աթկաղ չըն անըմ» (ն. տ., էջ 57):

Տըմբլա

Որոշյալ առումով. «Էս մօտէրքըմը սարին են զօլն ի քէցալ, վէր ճըղված տըմբլիս մըհար էշու կաշի ճարիմ» (ն. տ., էջ 27):

Անորոշ առումով. «Խէղճ հըյվըններին թրկեւան ու բըղըրըղիւան կաշին ծըկծըկօտվալ ա, տըեռալ շըտարար, էլ տըմբլու յարամիշ չինըմ» (ն. տ., էջ 28):

Ծառ

Որոշյալ առումով. Ծառէն ճըղները կուտրատալ ըս:

Ծառէն տակէն ըս նստալ:

Անորոշ առումով. վէր ծառու ճըղներ ըս կուտրատալ:

Վէր ծառու տակ է ըս նըստալ:

Ինչպէս երևում է բերված օրինակներից, Ղարարաղի և Հադրութի բարբառներում բառը անորոշ առման դեպքում ենթարկվում է ու հոլովման, իսկ որոշյալ առման դեպքում՝ այլ: Անորոշ առման այս յուրահատուկ ձևավորումը կցական տիպի հոլովման ժամանակ դրսևորվում է եղակի սեռական, տրական և հայցական (անձի առման դեպքում) հոլովներում, իսկ մյուս հոլովներում քննարկվող առումների տարբերակումը կատարվում է հոգի միջոցով:

Օրինակ՝

Որոշյալ առում .

Ուղղ. մարթը

Ս. մարթին

Տ. մարթին

Հ. մարթին, մարթը

Բ. մարթան

Դ. մարթավը

Ն. դործածական չէ

Անորոշ առում

մարթ

մարթու

մարթու

մարթու, մարթ

մարթա

մարթավ

Ղարարաղի և Հադրութի բարբառներում կան անջատական սիստեմի հոլովման որոշ դրսևորումներ: Այս սիստեմի հոլովման դեպքում անորոշ առման նշված առանձնահատկությունը դրսևորվում է նաև բացառական, դործիական, ներգոյական հոլովներում:

Օրինակներ՝

Ուղղ. մարթ

Ս. մարթու

Տ. մարթու

Հ. մարթու, մարթ

խօխա «Երեխա»

խու, խուխու

խու, խուխու

խու, խուխու (կամ խօխա)

Բ.	մարթոն անա (ներստա)	խու անա (ներստա)
Գ.	մարթոն անալ (ներստալ)	խու անալ (ներստալ)
Ն.	մարթոն անըմ (ներստըմ)	խու անըմ (ներստըմ)

Կցական և անջատական սխտեմի հոլովումների անորոշ առման այս տարրերությունների պատճառն այն է, որ անջատական սխտեմի հոլովման ժամանակ բացառական, գործիական և ներգոյական հոլովներում իրրե առաջին բաղադրիչ հանդես է գալիս տրական հոլովի ձևը, որն ունենում է ու հոլովիչը, ի տարրերություն նույն բառի որոշյալ առման հոլովիչի Խակ անա (ներստա) անալ (ներստալ), անըմ (ներստըմ) անջատած մասնիկները թե որոշյալ և թե անորոշ առումների դեպքում ունենում են միևնույն ձևը, և առումների տարրերությունը երևում է միայն առաջին բաղադրիչից: Օրինակ՝ մարթին անա-մարթոն անա, մարթին անալ-մարթոն անալ, մարթին անըմ-մարթոն անըմ:

Անորոշ առման դրսևորման այս առանձնահատկությունը հատուկ է ոչ միայն գոյականների ճնշող մեծամասնությունը, այլև անորոշ գերբային, թվականին, ածականին, իհարկե, երբ դրանք գործածվում են գոյականաբար և հոլովվում: Օրինակներ. կարբիլ «կարգալ»-կրքիլին-կրքիլու, օտել թուտլա ուտելին-ուտելու: Կան նաև կրքիլ, ի ուտելի և նման ձևերը, բայց սրանք վերածվել են ածականների: Թվականների օրինակներ. չօրք-չօրքէն-չօրքու, տասսը-տասսէն-տասսու, քըսան-քըսանէն-քըսանու և այլն: Ածականների օրինակներ. լավ-լավին-լավու, փիս-փիսին-փիսու, հաստ-հաստէն-հաստու և այլն:

Ինչպես է առաջացել բառի անորոշ առման ձևային տարրերական այս միջոցը: Առումների ձևային տարրերական անհրաժեշտությունը տրամաբանական տեսակետից հասկանալի է: Առարկան խոսողի համար կարող է լինել կամ նրա կողմից կարող է գիտվել իրրե հայտնի, ծանոթ և հակառակը՝ իրրե անհայտ, անծանոթ: Տրամաբանական այսպիսի տարրերակումը կարող է ամրապնդվել լեզվական որևէ միջոցով, ստանալ քերականական ձև՝ դրսևորվելով իրրե քերականական կատեգորիա: Ինչ վերաբերում է նշված բարբառներում բառերի մեծ մասը անորոշ առման դեպքում ու հոլովման ենթարկվելուն, իրրե այդ առման դրսևորման միջոց, կարծում ենք, որ դա կատարվել է հետևյալ կերպ:

Ու հոլովումն, իհարկե, խորթ չէ հայերենին: Այն կա թե գրաբարում, թե արդի հայերենում և թե հայերենի բարբառներում: Հայտնի է նաև, որ ի հոլովումը ժամանակակից հայերենում մեծ կշիռ ունի, որին նա հասել է այլ հոլովումների պատկանող բառեր իրեն ենթարկելու միջոցով: Այդ երևույթը վերաբերում է ոչ միայն ժամանակակից հայերենին, այլև հայերենի շատ բարբառների, այդ թվում նաև Ղարաբաղի ու Հաղբութի բարբառներին: Այս տեղեկների հետևանքն ստացվել է այն, որ այնպիսի բառեր, ինչպիսիք են ծի ժծ, հիլի ճհայելի, ծիլի ժածելի, բէ ժթի և այլն այդ բարբառներում որոշյալ առման դեպքում ենթարկվում են ի հոլովման ծի-ծիլին հիլի-հիլվին, ծիլի-ծիլվին, բէ-բիլին: Խակ եթե ի հոլովման ուժեղ ազդեցությունը որոշակի դեր չխաղար այդ հարցում, պետք էր սպասել, որ դրանք նշված բարբառներում ևս հոլովվին ու հոլովումով: Այդ և շատ բառեր որոշյալ առման դեպքում կորցնելով ու հոլովումը, վերջինս պահ-

պանել են անորոշ առման գեպքում: Այսպես, ծիլին-ծիլու, հիլվին-հիլվու, ծիլվին-ծիլվու, քիլին-քիլու: Այսպիսով, մի կողմից հոլովական սիստեմում եղած անալոգիայի որոշակի հաջողությունը, մյուս կողմից բարբառի՝ իր ունեցած քերականական ձևը պահպանելու տեղեկնցը առաջացրել են միևնույն բառի հոլովման երկու սիստեմ (թեև այդ տարբերությունը բոլոր թեք հոլովներում չէ առկա): Հարարաղի և Հագրութի բարբառները այդ հնարավորությունն օգտագործել են իրրև որոշյալ ու անորոշ առումների տարբերակման միջոց, և դա շատ բնական է: Մեկ որ այդ բարբառներում ու հոլովումը ըմբռնվել է իրրև անորոշ առման արտահայտության միջոց, նա ստացել է նոր բովանդակություն և ապա տարածվել բառերի ճնշող մեծամասնության վրա: Երա ապացույց կարող է լինել այն, որ որոշյալ առման գեպքում տարբեր հոլովման պատկանող բառեր հաճախ անորոշ առման գեպքում ենթարկվում են ու հոլովման: Այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, հաց, պէն քրան, պէք քարձ, որոնք գրարարում, արդի հայերենում և շատ բարբառներում ենթարկվում են ի հոլովման, Հարարաղի և Հագրութի բարբառներում անորոշ առման ժամանակ ու հոլովման պատկանելը (հացու, պէնու, պէքու) պետք է բացատրել ոչ այլ կերպ, քան ու հոլովումը, իրրև անորոշ առման գրսևորման միջոցի ըմբռնման և, անկախ բառի հոլովումից (որոշյալ առման գեպքում), անորոշ առումը ու հոլովումով արտահայտելու փաստով:

Նշենք նաև, որ ու հոլովումը իրրև հոլովման առանձին սիստեմ (ոչ իրրև բառի անորոշ առման ձև) իսպառ չի վերացել այդ բարբառներում: Օրինակներ, խընձօրէ ժխնձորենի, հացէ ճհացենի, շըլլօրէ ճսալորենի և այլ բառեր, մեծ մասամբ ծառերի տեսակների անուններ, ենթարկվում են ու հոլովման: Այս գեպքում, իհարկե, անորոշ առումն արտահայտվում է զրո վերջավորությամբ:

Վերևում տեսանք, որ եթե անջատական սիստեմի հոլովման ժամանակ անորոշ առման արտահայտման այս հետաքրքրական միջոցը գրսևորվում է բոլոր թեք հոլովներում, ապա կցական հոլովման սիստեմում բացառական, գործիական, ներգոյական հոլովներում այդ առումների տարբերակումը կատարվում է սովորական եղանակով, այսինքն՝ երկու առումների գեպքում էլ բառը ենթարկվում է նույն հոլովման, միայն որոշյալ առման գեպքում բառաձևն ստանում է որոշիչ հոգ: Որտեղից է առաջանում այս տարբերությունը:

Հարարաղի և Հագրութի բարբառներում, ինչպես և արդի հայերենում, տարբեր հոլովումների տարբերությունը երևում է հատկապես սեռական, տրական, մասամբ հայցական հոլովներում: Անկախ այն բանից, թե բառերը որ հոլովման են պատկանում, նրանք հաճախ բացառական, գործիական և ներգոյական հոլովներում չեն պահպանում իրենց հոլովիչը և այս հոլովներում մեծ մասամբ չի երևում, թե տվյալ բառը որ հոլովման է պատկանում: Այդպես է եղել նաև ու հոլովման հետ: Ու հոլովիչը այդ հոլովման բոլոր թեք հոլովներում չէ հանգես եկել, և երբ հոլովման սիստեմը վերածվել է նաև անորոշ առման գրսևորման միջոցի, վերջինս վերաբերել է ոչ բոլոր թեք ձևերին: Իսկ, քանի որ, ինչպես ասվել է վերևում, անջատական սիստեմի հոլովման մեջ բացառական, գործիական, ներգոյական հոլովաձևերի առաջին բաղադրիչը ձևով նույնն է տրականի

հետ, որն ունի ու հոլովիչ, այդ պատճառով էլ այս սխտեմի հոլովման մեջ անորոշ առումը հոլովումով տարբերվելը վերաբերում է բոլոր թեք հոլովումներին:

Այսպիսով՝

1. Միենույն քերականական կատեգորիան, ինչպես հայտնի է, համաժողովրդական լեզվում և բարբառում կարող են գրաևորվել տարբեր միջոցներով: Եթե հայերենի այլ հատվածներում, այդ թվում և ժամանակակից հայերենում, անորոշ առումն արտահայտվում է զրո վերջավորությամբ, ապա Ղարաբաղի և Հաղարթի բարբառներում, անորոշ առումը գերազանցապես արտահայտվում է հոլովման առանձին սխտեմով՝ ու հոլովումով:

2. Այդ հետաքրքրական իրողությունը պատմական զարգացման բարդ պրոցեսի հետևանք է, հետևանք հոլովման սխտեմում եղած անալոգիայի օրենքի, որով այլ հոլովման պատկանող բառերը, տվյալ դեպքում ու հոլովման ենթարկվող բառերի մեծ մասն անցել է ի և այլ հոլովումների. և դրան հակառակ՝ բարբառներն աշխատել են պահպանել շատ բառերում անհետացող ու հոլովումը, վերջինիս տալով քերականական նոր իմաստ՝ անորոշ առման իմաստ:

3. Ու հոլովման նոր իմաստ ձևեր բերելը պատճառ է դարձել այդ հոլովման՝ նոր ձևեր բերած իմաստով տարածվելուն նաև այլ շատ բառերի վրա:

4. Այս ամենը հաստատում է այն ճշմարտությունը, որ լեզվի, ինչպես և բարբառի մեջ գործող օրենքները իրարից կտրված և անկախ չեն. դա երևում է հոլովման և առումների մեջ կատարված փոփոխությունների ներքին կապից և պայմանավորվածությունից: Իսկ դրա պատճառն այն է, որ լեզուն, ինչպես և բարբառը ոչ թե քերականական կատեգորիաների ու լեզվական այլ իրողությունների մեխանիկական գումար է, այլ զբաղեցնում է միասնությունը հանդիսացող մի կուռ սխտեմ: Ուրեմն, այդպիսի սերտ կապի մեջ են նաև նրանց համապատասխան օրենքները: Հաճախ, ինչպես տեսանք վերևում, մի օրենքի գործունեությունը կարող է բախվել մի այլ օրենքի գործունեությանը, և այդ բախումը կարող է ավարտվել ոչ թե մեկի կամ մյուսի բացարձակ հաղթանակով, այլ այն կարող է հանգեցնել նոր իրողության առաջացմանը, որի մեջ ներգրված են ունեն հակառակ ուղղությամբ գործող օրենքները:

Ոչ միայն համաժողովրդական լեզվի մեջ եղած կատեգորիան կարող է բարբառում ունենալ յուրահատուկ գրաևորում, այլև բարբառում կարող են առաջանալ այնպիսի կատեգորիաներ, որոնք հատուկ չեն համաժողովրդական լեզվին: Այսպես, հայտնի է, որ հայերեն գրական լեզուներում մակրային հատուկ չէ ժամանակի կատեգորիան: Ժամանակի մակրայները միևնույն ձևով կարող են գործածվել թե անցյալում կատարված, թե ներկայում կատարվող և թե ապագայում կատարվելիք գործողության հատկանիշ (ժամանակ) ցույց տալու համար: Օրինակ, նա շուտ եկավ: Նա շուտ է գալիս: Եւ շուտ կգա:

Այն մակրայները, որոնք վերաբերում են ժամանակի միայն մեկ հատվածին՝ միայն անցյալին, կամ միայն ապագային, ժամանակակից հայերենում նույնպես ձևով չեն տարբերվում: Իսկ Ղարաբաղի և Հաղ-

րութի բարբառներում ժամանակի մակրայններին հատուկ է ժամանակի կատեգորիայի որոշ յուրահատուկ գրականութիւն: Այդ բարբառներում, եթե մակրայնը ցույց է տալիս ներկայում կատարվող կամ ապագայում կատարվելիք գործողութեան հատկանիշ, գործածվում է իր ուղիղ ձևով: Իսկ եթե նա գործածվում է անցյալ ժամանակում կատարված գործողութեան հատկանիշը ցույց տալու համար, ձևը է բերում ձևային նոր հատկանիշ:

Այսպէս մրհնգ՝ (< հիմիկ) «հիմա» մակրայնը, թեև ներկայի իմաստ ունի, բայց կարող է ցույց տալ նաև մոտ անցյալ, ըստ որում և կրել ձևային փոփոխութիւն՝ վերջից ստանալ ի:

Օրինակներ. Մը՛էնգ՝ի ըմ յըէկալ «Հիմա (հենց նոր) եմ եկել: Բայց՝ Մրհէնգ՝ ք՛ընամ ըմ (չբր.): Մըհէնգ՝ քիս ըմ (չգրթ.) «հիմա գնում եմ»: Մըհէնգ՝ քիննական ըմ «հիմա գնալու եմ»:

Կանօխ (< կանուխ) «վաղ», «շուտ» մակրայնը նույնպէս խոսելուց հետո կատարվելիք գործողութեան ժամանակ ցույց տալու համար գործածվում է իր ուղիղ ձևով, իսկ անցյալում կատարված գործողութեան ժամանակ ցույց տալու համար վերջից ստանում է է և շեշտի տեղափոխութեան պատճառով առաջին վանկում կատարվում է ա>ը հնչունափոխութիւնը, այն է՝ կընօխէ: Օրինակ, կանօխ կրկիսա: Բայց՝ կընօխէ ըս յըէկալ:

Բերենք այլ օրինակներ.

Ասօր էրկու օրական ըմ ըննական «Այսօր երկու աշխօր եմ անելու (վաստակելու)»: Բայց սօրէ էրկու օրական ըմ ըրալ «Այսօր երկու աշխօր եմ վաստակել»:

Ըստարէ թօռ շատ ա կ՛ըլական «Այս տարի անձրև շատ է գալու»: Բայց ըստըռու, թօռ շատ ա յըէկալ «Այս տարի անձրև շատ է եկել»:

Պըրուգյու՛ ժօղօլ ա իննական «Երեկոյան (այս) ժողով է լինելու»: Բայց՝ Ուրգօնէ ժօղօլ ա իլալ «Երեկոյան ժողով է եղել»:

Դուրբուրու՛ գյու՛ քիննական ըմ: «Իրիկնամուտին (այս, գալիք) գնալու եմ: Բայց՝ Դուրբուրգ՛օնէս քընցալ ըմ, «Իրիկնամուտին (այս, նոր անցած) գնացել եմ»:

Այն մակրայները, որոնք վերաբերում են միայն անցյալին, ևս ունեն նույնպիսի ձևային առանձնահատկութիւն: Օրինակներ. Յըրկէ (< երկկ) ծու՛ն ա յըէկալ «Երեկ ձյուն է եկել»: Մըկալօրէն (< մեկ այլ օր) հօնձը ըսկըսալ ըն, «Երեկ չէ մյուս օրը հունձը սկսել են» և այլն:

Փորձենք բացատրել, թե ինչպէս են առաջացել մակրայների ժամանակի կատեգորիայի այս գրականութիւնները Ղարաբաղի և Հաղբութի բարբառներում:

Նախ պետք է նկատի ունենալ, որ մակրայները առաջացել են այլ խոսքի մասերից, այն էլ մեծ մասամբ գոյականներից: Գոյականից մակրայների առաջացման տարրեր ուղիներ կան, որոնցից մեկը հոլովական իմաստի մթագնումը կամ կորուստն է: Այս եղանակով են առաջացել էգուց, իրոք, մասամբ, սակալ, բնալ և բազմաթիւ այլ մակրայներ: Մեզ հետաքրքրող իրողութիւնը հետևանք է այն բանի, որ մակրայի են վե-

¹ Տարև, ուսարև «տարի, այս տարի» բառերի շեշտը ընկնում է նախափերջին վանկի վրա, իսկ նույն բառից առաջացած ուսոռու ձևի մեջ շեշտը ընկնում է վերջին վանկի վրա: Այդ պատճառով վերջին վանկի ր-ն վերածվում է կոշտ ու-ի:

բաժնիկը բառերի ոչ միայն ուղիղ, այլև թեքված ձևերը, ըստ որում դրանք ստացել են իմաստային և կիրառական յուրահատկություններ: Անցյալի իմաստ ունեցող մակրայնները առաջացել են բառերի սեռական հոլովաձևերից: Դա երևում է այդ մակրայնների թե՛ ձևից և թե՛ գործածության որոշ առանձնահատկություններից:

Նախ՝ ձևի մասին:

Անցյալ ժամանակ ցույց տվող մակրայնները ուղիղ ձևից (որոնք գործածվում են ներկայում և խոսելուց հետո կատարվելիք գործողության հատկանիշ ցույց տալու համար) տարբերվում են ի, է (ն), ու քերականական մասնիկներով: Դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ երբեմնի սեռական հոլովի վերջավորությունները՝ հոլովիչները: Եւ շատ որոշակի երևում է հատկապես այն բարդ բառերից, որոնց երկրորդ բաղադրիչը այժմ էլ առանձին գործածվում է իրրե գոյական և հոլովվում է նույն հոլովիչով: Այսպես, մրկալօրեն, էնօրեն, սօրէ բառերի երկրորդ բաղադրիչն է օր՝ բառը, որը իրրե գոյական ենթարկվում է է հոլովման, օրինակ, օրեն կէսին պէնը պըրծալ ընք Վժրվա կեսին բանը (գործը) վերջացրել ենք: Օրեն պէնը էջսին չըն թօղէ: Վժրվա գործը վաղվան չեն թողնի: Մւրեմն, ինչպես տեսնում ենք, միևնույն է քերականական մասնիկը (իսկ ն-ն հոդ է), որ հանդես է գալիս իրրե անցյալ ժամանակի մակրայնի քերականական գրսևորման միջոց, հանդիսանում է այդ մակրայնների երկրորդ բաղադրիչը հանդիսացող օր բառի հոլովիչը:

Աստարէ (այս տարի) բառի համապատասխան անցյալի ձևն է ըստըռու, որը հատկանշվում է ու մասնիկով: Այստեղ ու մասնիկի՝ հոլովիչ լինելը երևում է նրանից, որ տարէ բառը Ղարարաղի և Հադրութի բարբառներում ենթարկվում է ու հոլովման: Օրինակ, Վճարուն կէսին ապուռը (եղջերավոր անասունների կեր) կրլխալ ա: Վճարվա կեսին կերը վերջացել է», Ուրեմն՝ ըստըռու բառը ևս սեռականի քարացած ձև է:

Հոլովման տեսակետից հետաքրքրական է յըրկէ «երեկ» մակրայնը, որի է-ն ամենայն հավանականությամբ սեռական հոլովի վերջավորություն է: Դա երևում է նրանից, որ յըրկէ բառը սովորական ձևով չի հոլովվում, բայց առանձին դեպքերում կարող է հոլովվել փոխանուն սեռականի պես: Այսպես, յըրկէնը, յըրկէնիմ, յըրկէնան և այլն: Վերջին շրջանում երեկ բառը յէրէջ՝ ձևով մտել է Հադրութի բարբառը, և այդ ձևը ևս իրրե անցյալ ժամանակ ցույց տվող բառ այժմ ավելի գործածվում է յէրէգի ձևով: այսինքն՝ մյուս մակրայնների պես, անալոգիայով ստացել է ի մասնիկը:

Որ իսկապես անցյալ ժամանակ ցույց տվող մակրայնները նախկին սեռական հոլովաձևեր են, վկայում են, նրանց ձևերի վերոհիշյալ քննարկումից բացի, նաև յուրահատուկ կիրառությունները: Ներկա և ապառնի ժամանակի իմաստ ունեցող մակրայնները գրվում են միայն բայի վրա և գործողության կատարման ժամանակ են ցույց տալիս, իսկ անցյալ ժամանակի իմաստ ունեցող մակրայնները, բացի դրանից, կարող են երբեմն գրվել նաև գոյականի ու գոյականաբար գործածվող բառերի վրա: Օրինակներ. Յըրկէ ծունը, սօրէ հալալ ա. «երեկվա ձյունը այսօր հալել է»: Սօրէ կէրածըս մըտէս չի, յըրկէ ասածըս մըտէս կինի՞, «նույնիսկ այսօրվա կերածս չեմ հիշում, երեկվա ասածդ կարող էի հիշել»: Մըկալօրեն ծու-

դավումը քրդական խօսքով ընդհանուր է մյուս օրվա ժողովում քո մասին խոսել են»:

Անցյալ ժամանակի մակրայների այսպիսի գործածությունները, ի տարբերություն ներկա և ապառնի ժամանակի մակրայների, ևս ցույց են տալիս, որ իսկապես անցյալ ժամանակի մակրայները առաջացել են սեռական հոլովի ձևերից: Այնուհետև, երբ նախկին հոլովիչները արդեն ձեռք են բերում մակրայի անցյալ ժամանակ ցույց տալու նշանակություն, կարող են տարածվել ու տարածվում են նաև այլ բառերի վրա:

Այսպիսով, Ղարաբաղի և Հադրութի բարրապահներում ժամանակի մակրայներին հատուկ է ժամանակի կատեգորիան: Դա հետևանք է այն բանի, որ մակրայների են վերածվել այլ խոսքի մասերի ոչ միայն ուղիղ ձևերը, այլև սեռականի ձևերը, որոնք բնականաբար նախապես եղել են հատկացուցիչներ, իսկ մակրայի վերածվելուց հետո գործածվում են իրեն գործողության կատարման անցյալ ժամանակը ցույց տվող բառեր և որպես այդպիսին մյուս մակրայներից տարբերվում են ոչ միայն իմաստով, այլև ձևով:

Այս իրողությունը հետաքրքրական է ոչ միայն մակրայի՝ ժամանակի կատեգորիա ունենալու տեսակետից, այլև քերականական ձևի և քերականական իմաստի փոխհարաբերական տեսակետից: Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես քերականական ձևը կորցնելով իր բուն իմաստը, կարող է ձեռք բերել քերականական նոր իմաստ: Վերջինս պայմանավորված է մի կողմից լեզվի մեջ զգացվող անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից՝ բառի լեկսիկական իմաստի և բառաձևի քերականական իմաստի ունեցած պոտենցյալ հնարավորությամբ:

Ամբողջ վերոհիշյալից երևում է, թե ինչպես համաժողովրդական լեզվի այս կամ այն կատեգորիան կարող է բարրապահվել վերածվել այլ կատեգորիայի, թե ինչպես դրա հետևանքով կարող է առաջանալ նոր կատեգորիա, և որ այդ զարգացումը հաճախ հանդիսանում է տարբեր օրենքների բարդ ու երկարատև գործունեության արդյունք: